ԿԱՐԾԻՔ

Աշոտ Լեկդարի Մանուկյանի «Ընտանեկան դաստիարակության հիմնահարցը հայ էթնոմանկավարժական մշակույթում» խորագրով ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը ներկայացվող ատենախոսության վերաբերյալ

Բոլոր ժամանակներում ընտանիքը եղել է տվյալ ազգի (էթնոսի) ավանդույթների և մշակույթի հիմնական կրողը, պահպանողը և վերատրադրողը: Միևնույն ժամանակ ընտանիքը՝ որպես հասարակական կառույց, մշտապես գտնվել է պետական և համաշխարհային քաղաքական, տնտեսական և մշակութային տեղաշարժերի դրական և բացասական ներթափանցող ազդեցությունների ոլորտում: Ընտանիքը միավորում է ավանդականը և նորարարականը՝ կարևորելով ընտանեկան դաստիարակությունը որպես ազգային արժեքների՝ էթնոմշակույթի, պահպանման գլխավոր նախապայման:

Հայ էթնոմանկավարժական մշակույթում ընտանեկան դաստիարակության հիմնահարցի ուսումնասիրությանն է նվիրված Ա.Մանուկյանի թեկնածուական թեզը:

Ատենախոսության արդիականությունը պայմանավորված է հայ էթնոմանկավարժական մշակույթում կուտակված դաստիարակչական փորձի ուսումնասիրման, վերլուծության և կրթական համակարգում ներդրման անհրաժեշտությամբ, քանի որ նման մոտեցումը կնպաստի ազգային և համամարդկային արժեքների ամրապնդմանը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, գրականության ցանկից, ներառում է 4 աղյուսակ, 15 տրամագիր, 4 հավելված:

Ներածության մեջ հիմնավորված է ատենախոսության արդիականությունը, հստակ ձևակերպված են օբյեկտը, առարկան, նպատակը, վարկածը, առաջադրված խնդիրները, ներկայացված են հետազոտության մեթոդաբանական հիմքերը,

գիտական նորույթը, տեսագործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Ատենախոսության առաջին «Ընտանեկան դաստիարակությունը՝ սոցիալ-մանկավարժական հիմնախնդիր» գլխում փիլիսոփայական, սոցիոլոգիական, մանկավարժական, հոգեբանական, ազգագրական տեսանկյուններից բնութագրված են ընտանիքի ծագումը և զարգացման ընթացքը, ընտանիքի գաղափարի դրսևորումը համաշխարհային բանահյուսության մեջ, ներընտանեկան փոխհարաբերությունների իրավական, կենսաբանական ու բարոյական կարգավորումները, մեկնաբանված են հետազոտության թեմային առնչվող հիմնական հասկացությունները:

Ատենախոսը համակարգված վերլուծել և մեկնաբանել է տարբեր դարաշրջաններում գործող մանկավարժ մտածողների, ինչպես նաև հայ մանկավարժների հայացքները, մոտեցումներն ու գաղափարներն էթնոընտանեկան դաստիարակության վերաբերյալ: Շեշտադրված է ընտանիք-ազգ-պետություն ամբողջության պահպանման հիմնահարցը: Հեղինակը հիմնավորել է այն գաղափարը, որ ընտանեկան դաստիարակությունը և էթնոմանկավարժության մշակույթը մշտապես սերտորեն փոխկապված են եղել մարդկության պատմության բոլոր ժամանակաշրջաններում:

«Ընտանեկան դաստիարակության միջոցները հայ էթնոմանկավարժական մշակույթում» խորագրով երկրորդ գլխում ատենախոսը՝ համեմատական վերլուծության ենթարկելով տարբեր ժողովուրդների էպոսները և «Սասնա Ծռեր» էպոսի տարբերակները, ինչպես նաև հայկական ազգային երգերն ու պարերը, վեր է հանել հայկական ընտանեկան դաստիարակության հիմնային արժեքները և գաղափարները: Ծիսական արարողությունները ատենախոսը դիտարկել է որպես ընտանեկան արժեքների պահպանման ու փոխանցման դրսևորումներ, էթնիկական ինքնաճանաչման և ընտանեկան դաստիարակության միջոցներ:

«Ընտանեկան դաստիարակության հիմնախնդիրը ժամանակակից աշխարհում» խորագրով երրորդ գլխում վերլուծված են ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները փոխակերպվող հասարակության մեջ: Ատենախոսը համոզիչ հիմնավորումներով վեր է հանել այն խնդիրները, վտանգներն ու ռիսկերը, որոնք կարող են խաթարել ծնող-երեխա փոխհարաբերությունները, միջսերնդային հոգևոր կապը, ընտանեկան դաստիարակության համակարգի բնականոն գործառույթ-

ները: Ատենախոսության մեջ կարմիր թելով անցնում է այն միտքը, որ այսօրվա էթնոընտանեկան դաստիարակության որակով է պայմանավորված ապագայի համամարդկային մշակույթի որակը: 3.2. ենթագլխում կարևորվում է հայ էթնոմանկավարժական մշակույթի դերը ընտանեկան բռնության կանխարգելման կարևորագույն գործընթացում: Ատենախոսն առաջարկում է ուսումնասիրել բանահյուսական գործերում պահպանված ընտանեկան դրական վարքագծի օրինակները՝ դիտարկելով դրանք որպես ընտանեկան ճիշտ դաստիարկության կարևոր միջոց:

Ուշագրավ է երրորդ գլխի «Ընտանեկան դաստիարակության և միջսերնդային փոխհարաբերությունների վերաբերյալ սոցիոլոգիական հարցումների վերլուծություն» վերնագրով ենթագլուխը, որում ներկայացված են սոցիոլոգիական հարցումների արդյունքները: Սոցիալական հարցմանը ընդհանուր առմամբ մասնակցել է 381 մարդ: Երեք տեսակի հարցաթերթիկների միջոցով ուսումնասիրվել են հարցմանը մասնակցած դպրոցականների, մանկավարժների, ուսանողների, ծնողների վերաբերմունքն ու պատկերացումներն էթնոընտանեկան դաստիարակության վերաբերյալ: Հարցումների արդյունքները արտացոլված են գծապատկերներում ու աղյուսակներում և ուղեկցված համապատասխան վերլուծություններով ու եզրահանգումներով:

Ատենախոսի կողմից առաջարկվող «Ընտանեկան դաստիարակություն և արժեբանություն» փորձնական դասընթացի ծրագիրը կարելի է դիտարկել որպես գիտական աշխատանքի ամփոփում: Այն հասցեագրված է ավագ դպրոցի սովորողներին և ունի էթնոտեղեկատվական և դաստիարակչական ուղղվածություն: Ծրագրի բովանդակությունը սովորողներին հնարավորություն է տալիս հստակ պատկերացում կազմել ընտանիքի ծագման, զարգացման, ընտանեկան արժեբանության ու ներընտանեկան փոխհարաբերությունների վերաբերյալ: Դասընթացի ներդնման արդյունավետությունը տեսականորեն հիմնավորված է, սահմանված են նպատակը, խնդիրները, ակնկալվող վերջնարդյունքները: Մշակված ծրագիրը՝ որպես ատենախոսության կիրառական արդյունք, անշուշտ, բարձրացնում է ատենախոսության գիտամեթոդական արժեքը:

Ատենախոսությունն ամբողջական, ավարտուն և արդիական հնչեղություն ունեցող հետազոտություն է: Այն գրված է լեզվառճական և գրագիտական պատշաճ մակարդակով: Հետազոտության հիմնախնդրին վերաբերող գրականության, ինչպես նաև հարցման արդյունքների մշակումը, համակարգումը և վերլուծությունը վկայում

են ատենախոսի գիտահետազոտական աշխատանք ինքնուրույն կատարելու կարողության մասին: Հետազոտության եզրակացությունները տրամաբանորեն բխում են կատարած ուսումնասիրությունից և ատենախոսության հիմնական դրույթներից, որոնք արտացոլված եմ նաև ատենախոսի հրապարակումներում:

Նշվածի կողքին հարկ ենք համարում առանձնացնել որոշ դիտողություններ.

1. Ցանկալի կլիներ, որպեսզի ատենախոսությունում ավելի մանրամասն ներկայացված լինեին տեղեկություններ հարցման մասնակիցների վերաբերյալ (օրինակ՝ սեռը, տարիքը, ուսուցիչների մանկավարժական ստաժը և այլն), իսկ հարցման արդյունքների վերլուծությունը ներկայացված լիներ ոչ միայն տոկոսով, այլ նաև այդ հարցին պատասխանած մարդկանց թվով: (Օրինակ՝ 20% (n=) և այլն):

2. Շահեկան կլիներ, որ փորձնական դասընթացի իրականացմանը նախորդած և հաջորդած լինեին դասընթացի մասնակիցների հարցումները՝ ներկայացնելով դրանց արդյունքները ատենախոսության տեքստում: Հարցումների արդյունքների վերլուծությունը կօգներ հետադարձ կապ ստանալ և ավելի հստակ և համոզիչ պատկերացում կազմել դասընթացի ծրագրի արդյունավետության վերաբերյալ, պարզել, թե ինչքանով են արդյունքները համապատասխանում նախապես սահմանված (ակնկալվող) վերջնարդյունքներին: Ցանկալի կլիներ նաև, որ ատենախոսությունում նշված լիներ, թե ավագ դպրոցի ո՞ր դասարանի աշակերտների համար է նախատեսված սույն դասընթացը:

3. Հետազոտությունն ընդգրկում է 151 սկզբնաղբյուր, որոնք հղումների ձևով ամբողջությամբ արտացոլված են աշխատանքում: Սակայն գրական աղբյուներից միայն 30-ն են հրատարկվել վերջին տասը տարիների ընթացքում:

4. Որոշ վերլուծություններ և մեկնաբանություններ թեև խորքային են արված, այնուհանդերձ ծանրացնում են ատենախոսության բովանդակությունը (էջեր 76-81,89-93 և այլն):

Մեր կողմից արված դիտողություններն ընդհանուր առմամբ չեն նվազեցնում ատենախոսության գիտական արժեքը: Այն ավարտուն, ինքնուրույն հետազոտոտական աշխատանք է: Ատենախոսությունը շոշափում է մանկավարժական արդիական հիմնախնդիր և ունի տեսազործնական և կիրառական նշանակություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աշոտ Լեկդարի Մանուկյանի «Ընտանեկան դաստիարակության հիմնահարցը հայ էթնոմանկավարժական մշակույթում» խորագրով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանավորման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, ԲՈԿ-ի կողմից ԺԳ.00.01. «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է հայցած գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս
մանկավարժական գիտությունների դոկտոր, դոցենտ՝ Ժ.Հ.Պայլոզյան

Ժ.Հ. Պայլոզյանի ստորագրությունը հաստատում եմ
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գիտքարտուղար,
մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Մ.Մ.Իսպիրյան

14.02.2020 թ.